ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

5 սեպտեմբերի 2024թ. թիվ 627-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ,
ՆԵՐՔԻՆ ԱՈՒԴԻՏԻ ԿՈՄԻՏԵԻ ԿԱԶՄԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀՀ
ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 14-Ի ԹԻՎ 16-Ա
ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ներքին աուդիտի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 2-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետով, 5-րդ հոդվածի 5-րդ մասով, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասով և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասով, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի 2012 թվականի փետրվարի 23-ի թիվ 165-Ն հրամանի 3-րդ գլխի պահանջները՝

Ո ր ո շ ո ւ մ եմ.

1. Սահմանել ներքին աուդիտի կոմիտե՝ Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ներքին աուդիտի համակարգին աջակցելու նպատակով:

2. Հաստատել Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետի աշխատակազմի ներքին աուդիտի կոմիտեի կազմը՝ համաձայն հավելվածի:

3. Սահմանել, որ մարզպետի աշխատակազմի ներքին աուդիտի կոմիտեի քարտուղար է հանդիսանում «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի ներքին աուդիտոր, աշխատանքային խմբի ղեկավար Վ.Սայադյանը՝ առանց քվեարկելու իրավունքի:

4. Ուժը կորցրած ճանաչել ՀՀ Լոռու մարզպետի 2021 թվականի հունվարի 14-ի «Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի ներքին աուդիտի կոմիտե սահմանելու, ներքին աուդիտի կոմիտեի կազմը հաստատելու և ՀՀ Լոռու մարզպետի 2013 թվականի մարտի 14-ի թիվ 108 կարգադրությունն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 16-Ա որոշումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Ստորագրող
ԱՐԱՄ ՂԱԶԱՐՅԱՆ
2003720081

2024-09-05 15:41:34 GMT+4
Հավաստված է ԷԿԵՆԳ-ի կողմից

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏ Ա.ՂԱԶԱՐՅԱՆ

2024թ. սեպտեմբերի 5
ք.Վանաձոր

Հավելված.
ՀՀ Լոռու մարզպետի
2024թ. սեպտեմբերի 5-ի
թիվ 627-Ա որոշման

Կ Ա Զ Մ
Լոռու մարզպետի աշխատակազմի ներքին աուդիտի կոմիտեի

Ա.Ղազարյան - կոմիտեի նախագահ, ՀՀ Լոռու մարզպետ

Վ.Սայադյան - «Քրոու ընդ Ասատրյանս» ՍՊԸ-ի ներքին աուդիտոր, աշխատանքային խմբի ղեկավար, կոմիտեի քարտուղար

Կոմիտեի անդամներ.

Գ.Ասրյան - ՀՀ Լոռու մարզպետի տեղակալ

Մ.Դալլաքյան - ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ

Գ.Քարհանյան - ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմի կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ

Ա.Սահակյան - ՀՀ Լոռու մարզպետի օգնական /խորհրդակցական ձայնի իրավունքով/

ՀՀ ԼՈՌՈՒ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Recoverable Signature

X

ԿԱՄՈ ԱՇՐԱՖՅԱՆ

Signed by: ASHRAFYAN KAMO 2610780427

Կ.ԱՇՐԱՖՅԱՆ